ԱԶԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Թանգարաններիպատմությունից

ՉՓԱԿՎՈՂ ԴՌԵՐՈՎ

Արմենուհի ԴԵՄԻՐՃՅԱՆ

Աղրամյան պողոտայի սկզբնամասի մի փիչ խորհրդավոր (Զարուբյան փողոց) սեւ տուֆից մի գողտրիկ տուն կա, ուր կյանքի վերջին տասը տարիներն ապրել է Ավետիք Իսահակյանը: Եռանկյուն գմբեթով եւ մուտք-գավիթով մյուս շինություններից տարբերվող այս կառույցը արտաքին ձեւավորմամբ պարսկական է Վարդեսին: Նրա ցանկությամբ է ընտրվել եւ սրբատաշ սեւ տուֆը, եւ հայկական ավանդական ճարտարապետության կամարակապ ոճը:

Այս տան դուռը բանաստեղծի ցանկությամբ միշտ բաց է եղել բոլորի առջեւ: Նրա շեմը տրորել են եւ անվանի մեծամեծներ՝ Պաբլո Ներուդան, Կրիշնան Չանդրը, Ժորժի Ամադուն, Նիկոլայ Տիխոնովը, Կոնստանտին Սիմոնովը, Արամ Խաչատրյանը, Հովհաննես Շիրազը, կաթողիկոսներ Գեւորգ Վեցերորդը եւ Վազգեն Առաջինը, եւ անծանոթ մարդիկ՝ ակնկալելով Վարդեսի ձեռնբաց գթասրտությունն ու աջակցությունը:

Այժմ էլ տան դուռը բաց է: Ներսում մի արդողած խորհրդավորություն է, թանգարանային վեհության մեջ խառնած անբացատրելի հանդիսավորություն, որ անօտարելի զորությամբ մնացել ու պահպանվել է պատերի մեջ, բազմաթիվ գրերի ու առօրեականից դուրս թվացող, «այլ աշխարհի» կնիք կրող առարկաների վրա:

1963-ից ի վեր տուն-թանգարան դարձած այս շինությունը այցելուներին թանկ է հատկապես երեք սենյակներով, որ պահպանված են անխաթար, այնպես, ինչպես եղել են բանաստեղծի օրոք: Աշխատասենյակում հնօրյա, զանգվածեղ գրասեղանն է՝ բանաստեղծի ձեռագրերով, կարդացած վերջին գրքերով, լամպով ու եզակի արձանիկներով:

Գրադարահատները ծանրաբեռ են գրքերով, որոնց մի նշանակալից մասը հայրական տան հավաքածուից է, ուսման տարիների եւ բազում ուղեւորությունների հայթայթումներից: Շատ հազվագյուտ գրքեր Հայաստանում այսօր կարելի է գտնել միայն Իսահակյանի անձնական գրադարանում:

Պարզ ու համեստ կահավորանքով ննջասենյակում՝ մահճակալի սնարի վերեւում, կախված է պատելի մոր՝ Ալմաստի լուսանկարը, որից Իսահակյանը չի բաժանվել երբեք: Այնուհետեւ՝ մի փոքրիկ գրակալ ու հին ոճի փայտե պահարան, տնային հանդերձանքի որոշ նմուշներ:

Հյուրասենյակի պատերի նկարներից հատկապես աչքի է ընկնում Սեդրակ Առաքելյանի «Ուղտերի քարավանը», որ սակայն «Աբու Լալայի» թեմաներով չէ: Դեպի խուլ աուլներ ուղեւորվող ուղտերը բարձած են գրեական պիտույքներով եւ գնում են լուսավորություն տարածելու: «Քո քարավանը դեպի լույս է գնում, իմը՝ դեպի խավար»,–նկարչին ասել է Իսահակյանը:

Դիմացի պատին «Սասունցի Դավիթ» նշանավոր գործն է, որ կառավարության հատուկ որոշմամբ գործվել եւ նվիրաբերվել է բանաստեղծի ծննդյան 75-ամյակի առթիվ: Այստեղ է նաեւ Սարյանի՝ ածխով արված հայցնի դիմանկարը: Իսկ հին կոմոդի վրա տիկին Սոֆիի չքնաղ ասեղնագործությունն է՝ դարձյալ ուղտերի քարավանով:



Այստեղից պատշգամբով դուրս ենք գալիս դեպի պարտեզ, ուր Վարդեսի ձեռքով տնկված ծառերը դեռեւս պահպանվում են: Պարտեզը գարնանից մինչեւ ուշ աշուն ծփում է բազմերանգ ծաղիկների մեջ: Մտորողի դիրքով Իսահակյանին հավերժացրել է ճանդակագործ Նիկոլայ Նիկողոսյանը, եւ ճանդակն այժմ պարտեզի ամենաաչքի ընկնող զարդն է:

Բացի հուշատան համալիրից թանգարանը համալրվել է լրացուցիչ ցուցադրությամբ: Առաջին հարկից սկսած՝ ցուցափեղկերը պատմում են նրա երկար ոդիսականը: Ղազարապատ պատկական գյուղն է, Գյումրիի ծննդավայր-տունը, Գետրգյան ճեմարանի մանրակերտը, ուր սովորել է վաղ պատանության տարիներին, ապա առաջին սերերը՝ Զարոն ու մեծահմա Շուշանիկը:

Բանաստեղծի 125-ամյակի առթիվ տարին իսահակյանական էր, եւ այս սրահները՝ մշտապես լիքը այցելուներով: Եկան դպրոցականներ, ուսանողներ, արվեստագետներ, եկան հեռու ու մոտիկ գյուղերից, քաղաքներից, եկան սփյուռքից ու արտերկրից: Բանաստեղծի հնարը՝ նորոգված ընչով, նորից հնչեց պատերի ներսում, եղավ նրա կենսագրության առաջին հատորյակի շնորհանդեսը, եւ կրկին փաստվեց, որ հայ ժողովուրդը գիտի գնահատել իր մեծերին, արժեւորել նրանց վաստակը:

1948-ին Իսահակյանին գաղտնի տեղեկացրել էին, որ հայոց հողերի հարցն օրերի մեջ լուծվելու է, եւ նա Զվարթնոցում կենաց բաժակ էր բարձրացրել՝ սպասելով բաղձալի ժամին: Բայց հայոց բախտի անիվը նորից հակառակ էր պտտվել, եւ բանաստեղծը ծանր արտրումներից ընկել էր անկողին: Այսօր թանգարանում պահպանվում է նաեւ այս պատմությունը:

---

1. Բանաստեղծին ուսուցանելն ավանդույթ է դարձել: Ոչ միայն ինքը՝ բանաստեղ-

20-րդ դարի հանգանակները. Դանիա

Հրաչյա Հովհաննի